

137/277


7

ՀԱՅ. ԺՈՂ. ԿՈՄԻՍԱՐԻԱՏ - ՍՈՅ. ԴԱՅ. ԳԼԽ. ՎԱՐ.

Ա.ՀԱ. Ա. ԱՍՏԵ. ԴՊՐՈՅԵ ԳՐԱԴԱՐԱՆ

ԲՆՈՒԹՅՈՒՆ և ԱՇԽԱՏԱՆՔ № 6
Խմբ. Մ. Զառաֆյանի լեզվ Ա. Արարատյանի

ԲԱՆՁԱՐԱՆՈՑ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ


ՏԵՐԵՎԱԾ - 1927

18 DEC 2017

ԱՇԽԱՏԱՆՔԻ Ա. ԱՍՏԻՃԱՆԻ ԴՐՈՒՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 6 «ՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎՊ ԹՀԽԱԾԱԿԱՆ» № 6
Խմբ. Մ. Զառաֆյանի յել Ա. Արարատյանի

ԲԱՆՁԱՐԱՆՈՑ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
8 Ե Ր Ե Վ - 6 - 1 9 2 7

Գրառեալիար 444 ր.	Տ. 619	Տիրամ 6000
Պետհրատի 2-դ տպարան Յերևանում—1128		



1-3348 գր

1. ՅԵՐԲ ԵՆ ՍԿՍՈՒՄ ԲԱՆՁԱՐԱՆՈՅԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Բոլոր գյուղատնտեսական աշխատանքների սկիզբը պիտի համարել աշունը կամ այն յեղանակը, յերբ հողը սկսում են նախապատրաստել և տարեկան աշխատանքների ծրագիր մշակել: Բանջարանոցի աշխատանքները սկսում են աշնանը:

2. ԲԱՆՁԱՐԱՆՈՅԻ ՏԵՂԸ

Բանջարանոցի համար ընտրում են հարթ կամ թեթև դեպի հարավ, հարավ-արևմուտք կամ հարավ-արևելք թեքված տեղ, վորը հյուսիսային և հյուսիս-արևելյան քամիներից պաշտպանված երրով, անտառով կամ վորեւե շենքով:

Ցանկալի է, վոր բանջարանոցը մեծ ջրամբարների՝ գետերի և լճերի մոտ լինի. սրանցմոտիկությունը թուլացնում ե աշնան և գարնան ցրտահարությունները:

Հողը պիտի լինի ուժեղ, ափազախառն կավալին կամ սեահող, վոչ ջրալի, բայց խոնավու-

թլուն պահող: Հողի խորությունը 35 սանտիմետր պակաս չպետք է լինի:

3. ՅԵՐԲ ՎԱՐԵԼ ՀՈՂԸ

Բանջարանոցի հողն ամեն տարի փորում են
փոշ պակաս քան 35
սանտիմետր խորությամբ կամ յերկու
բահ: Նոր վարր կա-
տարում են անպայ-
ման աշնանը: Գար-
նանը չի կարելի խոր
վար անել:


Գարնանը հողի
յերեսը մի բահ վըխ-

րացնում և փոցիսում են, հեռացնում են բազմա-
միք մոլախոտերի արժատները և հողը հարթեց-
նում են:

Յեթե տվյալ հողի վրա նոր պիտի բանջա-
րանոց պատրաստվի, ապա աշնանը հողի հիմնա-
շրջումն են կատարում:

Դրա համար հողը 60—70 սանտիմետր լայնու-
թիան շերտերի յեն բաժանում: Ապա մի ծայրից
փորում են առաջին շերտի յերեսը և ածում
կողքի հողամասի վրա, ապա փորում են տակը
և ածում դրա վրա: Հիմնաշրջում կատարելիս

4



Կ. 1. Թուխ

պիտի վարել առնվազն 60—70 սանտիմետր խո-
րությամբ: Յերկրորդ շերտը փորելիս հողն ածում
են առաջին փոսի մեջ, յերրորդ շերտը փորելիս,
յերկրորդ փոսի մեջ, իսկ առաջին շերտի հողը
տանում ածում են վերջին փոսի մեջ: Միշտ
պիտի հետեւ վերջին փոսի մեջ վերին շերտը փոսի
խորքը, իսկ տակի շերտը յերես ընկնի:

4. ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

Բանջարանոցի հողը մշակելիս կարելի յե-
ղործածել գաշտերի մշակման գործիքները՝ արորը
գութանը, փոցիսը, տափանը: Բացի այդ գործիք-
ներից այստեղ շատ գործածական ե բահը, ձեռ-
քի փոցիսը, ակսս անցկացնելու հատուկ փայտե-
ինքնաշեն գործիքը՝ շիթելու փայտեր և թոլիի
ներ՝ հողը փխրացնելու, մոլախոտերը վոչնչացնել
ու ե բուկ տալու համար:

5. ՄԱՐԳԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Մարգերի ձեր կախված և մշակույթից, կլի-
մայից և հողից:

Ցուքտ տեղերում, որինսակ՝ մեր յեննավին
շրջաններում, շատ խոնավ և կավոտ հողերում
և ջերմություն սիրող բույսերի համար (պամի-
գոր, վարունգ), բարձր մարգեր են պատրաստում

5

կամ բուլսերը թմբերի վրա լեն մշակում։ Բնդհակառակը՝ տաք տեղերում, չոր ավազու հողերում և մանավանդ ցածր ջերմության գիմացող բուլսերի (կաղամբ) համար ցածր մարգեր են պարաստում։ Այս գեղքում բուլսերը մշակում են ցածր թմբերի վրա կամ թմբերի մեջ և հարթ տարածության վրա (համեմ)։

Մարգերի լախըլ և յերկարությունը կախված է բույսից և մշակելու հարմարությունից։ Սովորաբար գործ են ածում մեկ մետր լախըլ և 6—7 մետր յերկարությամբ մարգեր։

Մարգերը պիտի հարթ լինեն և ուղղված հյուսիսից հարավ։ Յեթե տեղը շատ թեք է, այդ գեղքում մարգերի ուղղությունը համապատասխանեցնում են թերությանը։ Թեք տեղերում մարգերը կողքի են դասավորում, վոր անձրևածրերը նրանց չքանդեն և ցած շտանեն։

6 ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄ

Բոլոր տեսակի պարարտանյութերն ել կարելի յե գործածել բանջարանոցում, սակայն ամենալավը կիսափտած զոմաղըն է և լավ փտած խառնաղը։

Բանջարանոցի պայմաններում կարելի յե պատրաստել և գործ ածել նեղուկ պարտանյութեր։

Հեղուկ պարարտանյութին այսպէս են պատրաստում։ Տակառի $\frac{1}{4}$ մասը լցնում են արտաքնօցի, հավաքնի, աղակնու, ձիուկամ կովի թարս աղը։ Հետո մինչև բերանը չուր են լցնում և որը մի քանի անգամ խառնում են։ Կարելի յե մի յերկու բուռ հանգած կիր ավելացնել, վոր հոտ չգա։

Յերբ վոր խմորումը սկսի և ողի պղպջակները սկսեն բարձրանալ, պարարտանյութը պատրաստե։ Մի լիտր այդ հեղուկից խառնում են 5—10 լիտր ջրի հետ և պահածվի արկղով ջրում մարդերը կամ զատ-զատ բույսերը։

Պարարտանյութով ջրելուց առաջ պետք է անպայման նախ սովորական ջրով ջրել, վոր արմատները պարարտանյութից չփշանան։ Հեղուկ պարարտանյութ տալիս են միայն լավ արմատակած բուլսերին։ Ջրելուց հետո հողի յերեսը փխրացնում են։

7. ՍԵՐՄԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆԱԽԱՊԱՏԱՍՏԵԼԸ

Բանջարանոցի համար անպայման լավ, ընտրովի և առողջ սերմեր են վերցնում և ցանելուց առաջ ծլունակությունը փորձում են։ Լավ են միայն այն սերմերը, վորոնք արագ և միահամուռ են ծլում։

Յեթե վաստանն են ցանում - չոր սերմ
են գործածում. նախ այդ ժամանակ հողի մեջ
շատ խոնավություն կա և սերմերը հեշտ կուռչեն
և կծլեն, բացի այդ՝ չոր սերմը ցատերին հեշտ
ե դիմանում:

Ուշ ցանելիս սերմերը մեկ-յերկու որ թըր-
ջում են կամ նույնիսկ ծլեցնում. Ծլեցնելու հա-
մար սերմերը մաքուր կտավի մեջ են փաթաթում
և խոնավ թեփի մեջ դնում: Ամեն որ կտավը
բացում և սերմերը խառնում են: Հենց վոր սեր-
մերը սկսեն ծլել ցանում են:

8. ՑԱՆՔԱԸ

Բանջարանոցում բույսերը ցանվում են
անպայման շարքերով կամ բներով: Շարքերով
ցանած բույսերի թե դիտելը և թե խնամելը
շատ հեշտ է:

Նայած բույսին շարքերն անում են զանա-
զան հեռավորության վրա: Ցանելուց առաջ վո-
րոշ խորության ակոսներ են անցկացնում. մեծ
սերմերի համար ավելի խոր ակոսներ են անում
քան մանր սերմերի համար:

Ակոսները բաշում են ձգած թելի ոգնու-
թյամբ: Վերցնում են մարդի յերկարության թել
և ծալքերին յերկու վորքը ձողեր կապում: Ապա
մարդի վրա վորոշում են ակոսի տեղը և ձողերն

ամրացնում այսպես. վոր թելը ձգված լինի ակոսի
ուղղությամբ: Զգած թելի գծով վակտով էամ
բրիչով ակոս են անցկացնում:

Այդ աշխատանքը հեշտացնում են հետեւալ
միջոցով. վերցնում են մարդի լայնության մի հաստ
տախտակ և վրան հավասար հեռավորության վրա
նույնաչափ փալտե ձողեր են ամրացնում. Ապա
յերկու ծալքերին փալտեր ամրացնում և մարդի
մակերեսով բաշում: Այսպիսով մարդի վրա
միանգանից մի շարք զուգահեռ ակոսներ են
ստանում: Ցանելուց հետո ակոսի յերեսը հողով
ծածկում և թաթի ամրացնում, Առաջին որերը հա-
ճախ ջրում են վոր սերմ ըր չչորանան, մանա-
վանդ յեթե թրջած կամ ծլած սերմ են ցանել:

9. ԾԻԹԼԵԼԸ

Մի շարք բույսեր, որինակ կաղամբը, պամիգո-
րը, բագրիջանը, պղպղեղը ուղղակի մարգերում չեն
ցանում: Նրանց նախ խիտ ցանում են հատուկ
մարգերում կամ ջերմոցներում. Հաճախ ջրում
են, լավ խնամում և մոլախոտերը մեկ-մեկ հա-
նում: Յերբ բույսերը բավական սեծանում
են և 4—5 տերե ունենում, նոր դրանց տեղափո-
խում են մարգերը:

Ծիթլը տնկելիս ծնկածի փալտով նախ մի
փոսիկ են պատրաստում, ապա շիթլը մինչև

առաջին տերեները նրա մեջ դնում: Այնուհետեւ
կողքից ծնկաձև փալտը մտցնում են հողի մեջ
և հողը մոտեցնում արմատին: Արմատը պետք է
սեղմնալի հողի մեջ, և մոտը դատարկ տարածու-
թիուն չպետք է մնա:

Ակոսի կամ փոսի մեջ դնելուց առաջ շիթի-
լի արմատի ծացը կարում են:

Շիթելու առաջին որերն առատ ջրում և
հաճախ հողը փխրացնում են:

10. ՀՈՂԻ ՓԽՐԱՑՈՒՄ ՅԵՎ ԺԱՂԱՆ

Վորքան ել հողը լավ մշակեն, այնուամե-
նախիվ նա ժամանակի ընթացքում կեղեւ և կա-
պում և ամրանում է: Սկսպիսի հողը շուտ և
չորանում և խանգարում է արմատի կանոնավոր
շնչառությանը: Այդ պատճառով ել վոչ պակաս
քան յերկու-յերեք անգամ բնջարանոցի հողը
փխրացնում են:

Փխրացման աշխատանքին սովորաբար միաց-
նում են և քաղհանը կամ սոլախոտերի վոչնչա-
ցումը: Վորքան ել ձեր հողը մաքուր լինի, այ-
նուամենախիվ նրա վրա ժամանակի ընթացքում
մոլախոտեր են յերեռում: Դրանք կամ ուշ ծլող
կամ քամու, թռչունների, ջրի և մարդու թերոծ
սերժերից են: Մոլախոտերը խլում են հողի

սննդանյութերը, ջուրը և արակ զարգանալով
լերբեմն ծածկում են մշակովի բուլսին:

Փխրացման և քաղհանի միացյալ գործողու-
թյունը կատարում են արև ժամանակ, բայց
անձրեից կամ ջրելուց հետո:

11. ԶՐԵԼԸ


Նոր ցանած ժամանակ և քանի դեռ բուլսը
փոքր և հաճախ ջրում են: Յեթե ջրել հնարա-
վոր չե, այդ գեղքում մինչեւ ծլելը մարդերի լե-
րեսը խսիրով ծածկած են պահում:

Ջրում են ընդհանրապես լերեկոյան, արեց
մայր մտնելուց հետո, վոր ջուրը խոր ծծվի
հողի մեջ: Լավ և ջրել անձրեից կամ առվի ջրով:

Զրհորի ջուրը վորոշ ժամանակ պահում են
բայց ավաղանի մեջ և ապա միայն գործածում:

12. ԲՈՒԿ ՏԱԼԸ

Բուկ տալն անհրաժեշտ ե սի շարք բուլսերի



նկ. 2 Բուկը լցնող գործիք
համար. որինակ կաղամբը, կարտոֆիլը և սիմինդն

առանց բուկ տակու բերք չեն տա կամ շատ չնչին
բերք կտան

Բուկ տալու նպատակն եւ ա. հնարավորություն տալ բուկսին նոր արմատներ առաջացնել և ավելի շատ հող ոգտագործել, բ. ցողունին ավելի մեծ կայունություն տալ գ. հատկապես կարտոֆիլին հնարավորություն տալ շատ պալարներ առաջացնելու:


Բացի վերոհիշյալ բույսերից բուկ են տալիս նաև արմատապուղներին, պամիդորին, ընդեղեններին:

13. ԲԱՆՁԱՐԱՆՈՅԻ ՎՆԱՍՏՈՒՆԵՐԸ

Բանձարանոցային բույսերը բազմաթիվ հիվանդություններ և վնասատուններ ունեն: Մինչեւ նրանց տնկելը կամ ցանելը, այդ վնասատուններից մեծ մասն ապրում են բազմանում են մոլախոտերի և մշակովի բույսերի նախորդ տարվա մնացորդների վրա: Շատերն ել ապրում են հողի մեջ կամ փորոշ ժամանակով մտնում են հողը և այնուեղ հարսնուկ դառնում: Յեթե լավ դիտեք բանձարանոցալին բույսերը նրանց վրա անպայման տարբեր տեսակի թրթուններ կգրաներ: Դրանք զանագան մեծության են և տարբեր բույսերի վրա յեն ապրում: Ուսումնասիրենք վնասատուններից մի քանիսը:

Ա. ԿԱՂԱՄԲԱԹԻԹԵՐԵՐԸ

Կաղամբաթիթեռի ինչպես և մի քանի այլ թիթեռների ձվիկների կույտերը դուք կգտնեք կաղամբի տերեկի տակի յերեսի վրա: Այնտեղ նրանք պաշտպանված են աձրկից, արկից և




Նկ. 3 Կաղամբաթիթեռ

թռչուններից: Վորոշ ժամանակով հետո այդ ձվիկներից թրթուններ են գուրս դալիս, վորոնք սկսում են ագաճ բեն կրծել կաղամբի տերենները: Յեթե դիտեք թրթուններին, կտեսնեք, վորնրանց մարմինը զլանաձև է և բավական յերկար: Այդ յերկար մարմինը պահելու համար նա բացի կլծքի իսկական յերեք զույգ վատքերից ունի նաև հինգ զույգ փորի կեղծ վատքեր: Յերբ թրթունը

հասունանում ե, թողնում և կաղամբը և բարձրանում ե մոռակա պատը և այնտեղ հարսնուկի յե փոխվում: Նոխապես նա իր ն կապում ե այդ տեղին՝ մի քա ի տակ մետաքս թել փաթաթելով: Արդ ձեռվ նա ձմեռում է: Գարնանը նա ձեափոխվում ե և թիթեռ դառնում: Թիթեռը ձու յե ածում մոլախոտերի վրա, վորովինետե այդ ժամանակ դեռ կաղամբ չկա: Առաջին սերո նդր սնվում և սեծանում ե մոլախոտերի վրա: Նրանից առաջացած թիթեռներն արդեն լրաց գեղին ձեերն ածում են կաղամբի տերեների ցածի մակերեսի վրա:

Բ. ԲՈՒԽԱՎՈՉԻԼԵՐ

Թե կաղամբի, թե ալ բուխերի և թե մանավանդ վարունգի, սեխի և ձմերուկի վրա դուք կտանեք մանր կանսչավուն միջատներ: Յեթե խոշորացույցով դիտեք նրանց, կտեսնեք, թե ինչպես նրանք մանեն գալիս կամ անշարժ մի տեղում կպած են՝ կնճիթը բուխի մեջ խրած: Յերբ շատ են լինում, նրանք բագական զգալի վնաս են հասցնում: Նրանք անթե են: Ամառը կենդա-




Նկ. 4 Բուխավոչի

նի ձագեր են ծնում և շատ արագ բազմանում են: Մեջները կան նաև թևավորներ, վորոնիք այլ բույսերի վրա անցնելով տարածվում են:

Գ. ԻՇԱԽԱՌԱՆՉ

Իշախառանչն ապրում է հողի մեջ և առջեի թիականման ուժեղ վոտքերով իր համար անցքեր ե բանում: Անցքեր փորելիս նա կրծում է պատահած արմատները: Նա կերակրվում է թե բույսերի արմատներով ու պալարներով և թե վրդերով ու թըրթուններով:



Նկ. 5 Իշախառանչ

զգալի վնաս ե հասցնում մանավանդնոր տնկած շեթիւներին:

14. ԻՆՉՊԵՍ ԵՆ ԿՈՎՈՒՄ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻ ԴԵՍ

Վորքան վոր բազմազան են իրենք՝ վնասատուները և նրանց հասցըրած վնասները, նույնքան ել բազմազան են և նրանց դեմ կովեռու միջոցները:

Նախ վերևում դուք կարդացիք, վոր մոլա-
խոտերը և նախորդ տարվա բերքի մնացորդները
մնասատուների համար ապաստարան են ծառա-
յում։ Փորձեցեք ինքներդ մանրամասն դիտել
մոլախոտերը և կտեսնեք, թե ինչպես հազարա-
վոր մանր ու մեծ միջատներ են վիստում նրանց
տերեների և ցողունների վրա։ Պարզ է, վոր
մնասատուների գեմ կովելու առաջին պայմանն
ե՝ բանջարանոցը մաքուր պահել։ Այդ պատճա-
ռով ել բերքը հավաքելուց հետո անմիջապես բո-
լոր մնացորդները՝ տերեները և ցողունները հա-
վաքում և այրում են։ Նույն ձեռվ են վարփում
և բոլոր տեսակի մոլախոտերի հետ։ Այսու-
հետեւ դիտում են պատերը, ցանկապատը և վրան
յեղած բոլոր հարսնուկներն ու թրթունները հա-
վաքում և վոչնչացնում։

Աշնանը խոր վար են կատարում վոր հո-
ղի բերեսի շերտում յեղած հարսնուկները խորքն
լնկնեն և այնտեղ փոչնչանան։ Հողը փորելիս պա-
տ հած ծիրանի սուսիի թրթունները փոչնչաց-
նույ են։ Դա լավ է հաջողում մանավագույները
հողը շատ խոնալ ե, և թրթունները չխեղդվե-
լու հաւար վերին շերտն են բարձրանում։

Սակայն՝ վորքան ել հողը մաքուր պահեք,
դըմքալ բանջարանոցում մնասատուներ են յե-
րկան գալիս։ Դրանք գալիս են հարեան հողա-

մասերից, գաշտերից, փողոցներից։ Լավ բանջա-
րույթը միշտ հետեւում և դրանց և, նենց վոր յե-
րկացին, անմիջապես միջոցներ և ձեռք առնում։
Զպեւք ե մոռանալ, վոր վորքան շուտ վրա հաս-
նեն, այնքան մնասատուն գեռ թույլ կլինի և
կովելն ել՝ հեշտ։ Կաղամբի տերեկի տակի եղած
մի քանի տասնյակ ձվիկների կույտն ավելի
հեշտ ե վոչնչացնել քան նույնքան թրթուններին։
Պիտի ի նկատի ունենաք, վոր այդ թրթուն-
ները թիթեռ են դառնալու, խոկ ամեն թիթեռ
մի քանի տասնյակ կամ հորյուր ձու կարող ե
գնել։ Պարզ է, վոր այստեղ սմեն կորցրած վայր-
կանը կրնապատկում և յեռապատկում ե կովե-
լու գժվարությունը։ Դրա համար ել լավ բան-
ջարաբույթը բույսերը համախ դիտում ե և պա-
տահած ձվերը, թրթունները և այլ մնասատու-
ները ձեռքով հավաքում և վոչնչացնում։

Այս միջոցը բուսավորիների վեր սբերմամբ
գործադրելը գժվար է, նրանք մանր են և ամուր
կպած գալար տերեններին և ճյուղերին։ Նրանց
դեմ ծխախոտի թրմացով են կւորմ ։ Դրա հա-
մար վերցնում են 400 գրամ ծխախոտի
թափթփուկ 2—3 որ թրչում 3—4 լիտր ջրի մեջ,
ապա 2—3 ժամ յեփում և ամելացնում 100 գրամ
սոպոն։ Պատրաստած հեղուկին այնքան ջուր են
ավելացնում, վոր 12 լիտր պատրաստ։ Այդ հե-



զուկով սրսկում են հիվանդ բուլսերը։ Կարելի է հեղուկով թրջած կտորով սրբել բուսավոշիւները։ Յեթի ծխախոտ չկա ձեռքի տակ, կարելի է միայն սապոնի լուծույթով սրսկել։

Իշխառանշները հողի տակ են գտնվում, այդ պատճառով ել նրանց դեմ վերոհիշյալ ձևերով կըռվել չի կարելի։ Նրանց դեմ կովելու համար աշնանը բանջարանոցի զանազան մասերում 35—40 սանտիմետր խորությամբ փոս են փորում, ձիուաղբ լցնում և վրայից նորից հող ածում։ Իշխառանշները զգալով աղբի հոտը հավաքում են այստեղ, վոր ձմեռը տաք անցկացնեն։ Ուշաշնանը կամ ձմռան սկզբին քանդում են այդ հորերը և աղբը հողի յերեսին շաղ տալիս։ Իշխառանշներն ընդարձացած լինելով չեն կարողանում փախչել և ցրտից կոտորվում են։

15. ԲԱՆՉԱՐԱՆՈՅԱՅԻՆ ԲՈՒՅՍԵՐ


Բանջարանոցում մշակում են զանազան միամյա, յերկամյա և բազմամյա բուլսեր։ Այդ բուլսերից լուրաքանչյուրը հողի և խնամքի վերաբերմամբ իր վորոշ պահանջներն ունի։ Այսպես որինակ կաղամբը և պուասը լավ ածում և մեծ բերք են տալիս միայն գոմաղբով անմիջական պարագացումից հետո և շատ ել խոր չեն գցում իրենց արմատաները։ Բուլսերի մի այլ խումբ ընդհա-

կառակը՝ գոմաղբի անմիջական պարագացում չի սիրում, բայց հողի ավելի խոր շերտ ե պահանջում։ Այսպես են ճակնդեղը, գաղարը, ըողկը, կարտոֆիլը, պամիդորը, լոբին, կանաչեղենը։ Ուսումնասիրենը այս բույսերից մի քանիսը։

Ա. ԿԱՂԱՄԲ

Կաղամբն ուժեղ սևահողեր և սիրում և լավ աճում անմիջական պարագացումից հետո։

Թարմ գոմաղաբը մըտնում են աշնանը, իսկ կիսափոած գոմաղբը կամ խառնաղբը՝ գարնանը։



Նկ. 6. Կաղամբ

Շիթիլը ստանում են ջերմոցներում կամ հատուկ մարգերում։ Ծլած բուլսերը շիթիլում են 5—6 սանտիմետր հեռա-

վորության վրա։

Շիթիլիս արմատի ծայրը կտրում են, վոր կողքի ճյուղավորությունները զարգանան։

Հինգ-վեց շաբաթից հետո, յերբ ժիթիլները 3—4 տերե են զարգացըել, տեղափոխում են մարգերը։ Հանելիս շիթիլները լավ ջրում են և յերեկոյան դեմ արեն իջնելուց հետո հանում, Աշխատում են, վոր արմատների վրայի հողը չըթափի։

Եիթիլները անկում են շարքը-շարքից 50—
շ0 սանտիմետր և բույսը բույսից 50 սանտի-
մետր հեռու։ Այս աշխատանքը կատարում են
յերեկոյան։ Բայց կարելի յէ նաև առավոտը յեթե
միայն որն աճպոտ եւ։

Այսուհետեւ պետք յեղած ժամանակ քաղ-
հան են կատարում և ջրում։ Աճումն արա-
գացնելու համար հատուկ պարագացում են
տալիս։

Տնկելոց մի ամիս հետո առաջին անգամ
բուկ են տալիս։ Բարձր բույսերը պետք ե 3—4
շաբաթից հետո յերկրորդ անգամ բուկ տալ։

Յեթե ուժի աճումից գլուխները սկսում
են պայթել, արմատները բահով թեթև վնասում
են բույսը թեթև վեր են քաշում, վոր արմատ-
ների մի մասը փչանա և բույսը քիչ չուր և
անդանութ ստանա հողից։

Բ. ՊԻԱՍ

Պոասը հողերի վերաբերմամբ պահանջկոտ
չե, բայց ուժեղ պարարտացում ե սիրում։ Պոա-
սի համար հողն աշնանը խոր վարում են։

Եիթիլները անկում են 30—60 սանտիմետր
բույսը բույսից հեռու։ Կավ շիթիլը մատիտի
հաստութիւն ելինում։

Հարմար ե, վոր պոասը անկվի ակոսի մեջ

և աստիճանաբար հողով ծածկվի, այս ձեռվ մը-
շակելիս «վոտքը» սպիտակ ե ստացվում։

Գ. ՃԱԿՆԴԵՂ

Աս յել և անմիջական պարարտացում սիրում,
բայց վոչ կաղամբի ու պոասի չափ։

Սերմերը նախապես թրջում են կամ ծլեց-
նում և ուղղակի արտերում ցանում։ Այս գեպ-
քում հետո նոսրացնում են։ Ավելի լավ ե շիթիլ-
ներ ստանալ և շարքերով տնկել։

Ճակնդեղը և այլ արմատապտուզները յեր-
կամլու բույսեր են. առաջին տարին նրանք ի-
րենց արմատներում սննդի պաշար են հավաքում,
իսկ յերկրորդ տարին ցողուն և ծաղիներ են
տալիս։ Յերեքնա իրենց առաջին տարին նրանք
ցողուն են զցում, այս դեպքում արմատը փայ-
տանում ե և զործածելու համար փչանում։ Դա
տեղի յե ունենում յեթե ա. շիթիլը ցրտահար-
վել ե, ը բույսերը յերաշտի յեն յենթարկվել,
զ. հին սեր ներ են վերցրել։

Պարզ ե, թե սրա առաջն ինչպես կառնեն։

Դ. ԳԱԶԱՐ

Աս ավաղախառն, վիխրուն հողեր և սիրում։
Ուժեղ հողերում կոպիտ արմատ ե տալիս։ Յա-

Նույն են թրջված կամ չոր սերմեր, քամի չեղած
ժամանակին: Ցըտից չի վախում:



Նկ. 7. Գաղար

Աճենամեծ խնամքն այն ե, վոր գալար ժա-
մանակ հաճախակի հողը փխրացնում և մոլախո-
տերը հեռացնում են:



Նկ. 8. Բողկ

Ե. ԲՈՂԿ

Բողկը ցանվում ե վաղ գար-
նանը շաբքերով: Սիրում ե ուժեղ
սեահողեր: Հետազարում նոսրաց-
նում են և բուլսը բուլսից 7—8
սանտիմետրի վրա թողնում:

Զ. ԿԱՐՏՈՖԻԼ

Շուտ ստանալու համար կարտոֆիլը անկում
են թեթև կավախառն ավազահողի մեջ: Իսկ յե-
թե ցանկանում են շատ բերք ստանալ ուժեղ
սեահողում են տնկում:

Վերցնում են առողջ և, հասած պալարներ:
Յեթև պալարը մեկ ե, կարելի յե կարել, այն-
պես վոր յուրաքանչյուր կտորի վրա առնվազն
յերկու աչք լինի: Կտորները մի քանի ժամ թող-
նում են փոած, վոր կարած տեղը կեղի կապի
և հողում չփթի:

Տնկում են 12 սանտիմետր խորության
փոսերի մեջ, բուլսը բուլսից 50—55 սանտիմետ-
րի վրա:

Առաջին անգամ բուկ են տալիս, յերբ առաջին տերեները և ճյուղերն են դուրս դալիս։ Յերբ ցողունը հասնում է 15—17 սանտիմետրի, յերկրորդ անգամ են բուկ տալիս, յերկու շաբաթ հետո յերրորդ և վերջին բուկն են տալիս։

Է. ՊԱՄՒԴՈԲՐ

Պամիդորը հ զի վերաբերմամբ պահանջկուտ չե, սակայն ուժեղ հողերում շատ լավ է անում։ Շատ ուժեղ հողերում նա մեծ քանակով ճյուղ ու տերեւ և տալիս և ուշ և պտուղ կապում, այդ պատճառով ել այդպիսի հողերում պամիդորը լավ չի հասնում։

Սերմը ցանում են ջերմոցներում կամ մարդերում և 3—4 տերեանոց շիթիները տեղափոխում են մարդեր և անկում բուշը բուշից և շարքը շարքից 80—100 սանտիմետրի վրա։ Մովորաբար պամիդորի շիթիլը անկում են թմբերի ափին և տատիճանաբար բուշի մեծանալու հետ նրա բուկը լցնում են թմբի հողով։ Ակդպիսով վորոշ ժամանակից թումբը տեղափոխվում է դեպի բուշը և վերջինս կարծես բարձրանում և թմբի գագաթը։

Քանի բուշը փոքր և հաճախ քաղհանում են։ Յերբ պամիդորը ճյուղավորվում է, թույլ ճյուղերը և ծաղիկները կտրատում են, վոր մնացած-

ները լավ լուսավորվեն և բարձր վորակի պառուղ տան։

Պամիդորի ցողունը թույլ և և բամիներից ընկնում է, այդ պատճառով մոտը փայտի նեցուկներ են խփում։

Ը. ԼՈԲԻ ՅԵՎ. ՎՈԼՈՋԻՆ

Լոբին և վոլոյն ուժեղ հողեր են սիրում։ Լավ են աճում գոմաղբով պարարտացնելու հաջորդ տարին։

Սերմը յերկու որ թրջում են և ապա 2—3-ական ցանում՝ բներով։ Բունը բնից 50—60 սանտիմետր հեռու։ Յերբ բուկսերը մի փոքր բարձրանում են, մոտները փայտեր են տնկում, վոր վրան փաթաթվեն։ Մնացած ինամքը նույնն է ինչ վոր մկուս բուկսերինը։




Նկ. 9. Վոլոյն

Թ. ՎԱՐՈՒԽԵԳ

Սա ուժեղ հողեր և տաք, արևակող թերություն և սիրում։ Ցանում են չոր սերմերը յե-

թե հողը բավական տաքացել է: Հեռավորությունը բույսը բույսից թողնում են 30—50 սանտիմետր, նախած հողին և տեսակին:



Նկ. 10. Վոլոսնի ծաղկի կազմը

Ավելի լավ ե մի շաբաթից ցանքուր կրկնել. հետո կարելի չե նոսրացնել: Մարգերի շուրջը ջրելու համար առուներ են փորում և բույսերը մնում են թմբերի կամ բարձր մարգերի վրա: Մշակելու ակտ ձեր կոչվում ե վար դնել:

Վարունգը գետնատարած բույս ե: Սկզբի շրջանում առաջ ջրում են առունե-




Նկ. 11. Վարունգ

րով, Զորս տերեկի ժամանակ բուկ են տալիս և բույսի ծայրը կարում են:



1.	Ինչպես կազմակերպել բանջարանոցը	3
2.	Բանջարանոցի տեղը	3
3.	Յերբ վարել հողը	4
4.	Գործիքներ	5
5.	Մարդեր պատրաստելը	5
6.	Պարարտացում	6
7.	Սերմերի ընտրությունը և նախապատ րաստելը	7
8.	Ցանքսը	8
9.	Շիթլելը	9
10.	Հողի փխրացում և քաղհան	10
11.	Զրելը	11
12.	Բուկ տալը	11
13.	Բանջարանոցի վնասատուները	12
	ա. կաղամբաթիթեռ	
	բ. բուսավոշիլ	
	գ. իշախառանչ	
14.	Ինչպես են կռվում վնասատուների դեմ .	15
15.	Բանջարանոցալին բուկսեր	18
	ա. կաղամբ	
	բ. պուս	
	գ. ճակնդեղ	
	դ. գաղար	
	ե. բողկ	
	զ. կարտոֆիլ	
	է. պամիգոր	
	ը. լորի և փոլոռն	
	թ. վարունգ	



50

ՀՀ Ազգային գրադարան



NL0977279

Հ Վ Վ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՆՈՒՅՆ Պ

1

3348

1.	Տերեվաթափ և աշնան դու	
3.	Թռչունների չուն	10 »
4.	Պտուղներ և սերմեր	10 »
5.	Հող և նրա մշակումը	10 »
8.	Ինչ վոր կցանես, այն ել կընձես	10 »
11.	Բամբակ	10 »
12.	Տորփ, քարածուխ և նապթ	10 »
13.	Կովի կերը և խնամքը	15 »
15.	Ընտանի թռչունների խնամքը	20 »
16.	Մեղու	15 »
20.	Հանքեր	15 »
21.	Շերամ	10 »

ՀՈՒՅՈՒԳ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ

2.	Կենդ, հարժարացումը և ձմեռային քունը
7.	Ալիքի,
9.	Մարգագետին
10.	Ող և ջուր
14.	Կաթնամթերքներ
17.	Գյուղանատ, մեքենաներ և գործիք- ներ
18.	Ակվարիում և տերրարիում
19.	Ի՞նչպես կազմել հերթարիում
22.	Անտառ.

ԳԻՆԸ 10 ԿՐՊ